ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/181»

ք. Երևան

«21» «հոկտեմբերի» 2020թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է.Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Արմեն Բալդրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 44775000 (քառասունչորս միլիոն յոթ հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն 7462500 (յոթ միլիոն չորս հարյուր վաթսուներկու

հազար հինգ հարյուր): Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է << դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1095 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական)տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2 N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարությունը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Երևանի քաղաքապետարան	ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	ք. Երևան, Չարենցի 37
Կենտրոնական գանձապետարան	ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ 900012410016	Հ/Հ 20500 22067171001
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 01815551
Է.Կիրակոսյան ----------	Ա. Բալդրյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«28» «հոկտեմբերի» 2020 թ. կնքված
ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/181 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	30211150/1	Հիմնական և պահուստային տվյալների մշակման կենտրոնների վերազինման համակարգ		ներկայացված է ստորև	հատ	44775000	44775000	1	Արգիշտիի 1	1	Նախընտրելի ժամկետ է սահմանվում պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օր հետո մինչև դեկտեմբերի 25-ը ներառյալ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հհ	Նկարագրություն	Չափման Միավոր	Քանակը
1	**Հիմնական** և **պահուստային** տվյալների մշակման կենտրոնների վերազինման համակարգ Տվյալների մշակման երկու կենտրոնների համար անհրաժեշտ է մատակարարել, տեղադրել, գործարկել միասնական համակարգ, որը պետք է ներառի: **Ա)** երկու տվյալների պահպանման համակարգ, **Բ)** երկու սերվերային համակարգ, **Գ)**չորս ցանցային կոմուտատորներ՝ նախատեսված տվյալների պահպանման և սերվերային համակարգերի, ինչպես նաև առկա լոկալ ցանցի հետ այդ համակարգի համակցման համար,	Լրակազմ	1

	Դ)վերոնշյալ երեք կետերի սարքավորումների համակցման համար անհրաժեշտ բոլոր մալուխները : Ե) երկու անխափան սնուցման սարք		
	–Համակարգն արտադրող ընկերության կողմից հավատարմագրված առնվազն երկու սպասարկման կենտրոնի առկայությունը ՀՀ տարածքում պարտադիր է: **–Բոլոր ապրանքները պետք է լինեն նոր, գործարանային փաթեթավորմամբ, չօգտագործված:** **–Հայտատուն հայտի հետ պետք է ներկայացնի արտադրողի հավաստագիր առ այն, որ ապրանքները նախատեսված են Հայաստանյան շուկայում վաճառքի համար:**		

Ա) Տվյալների պահպանման մեկ համակարգի բնութագիրը

Համակարգը պետք է լինի ամբողջական լուծում, որը ներառում է տվյալների պահպանման համակարգի կառավարման մոդուլներ, ելքի-մուտքի միջերեսներ, համապատասխան հատուկ դիսկեր և դրանց համար նախատեսված դարակաշար, կառավարող ծրագրային ապահովում և դրա համար անհրաժեշտ արտոնագրերը, համակցման և հոսանքի լարեր, սերվերային պահարանի մեջ տեղադրման համար անհրաժեշտ մոնտաժային լրակազմ:

Համակարգը պետք է ապահովի տվյալների բարձր հուսալիություն և անվտանգություն՝ ներառելով կրկնակի մոդուլներ բոլոր կրիտիկական հանգույցներում, ինչպիսիք են հոսանքի սնուցման բլոկները, հովացուցիչները, կառավարման մոդուլները, դիսկային դարակաշարերի ու դիսկերի մուտքային ուղիները, արտաքին SAN ցանցերին միացման կապի միջերեսները և այլ բաղադրիչներ, որոնք կարող են ազդել տվյալների պահպանման ու հասանելիության վրա:

Առաջարկվող սարքավորումները պետք է մատակարարվեն արտադրողի երաշխիքով՝ վերջնական օգտագործողին փոխանցման պահից 3 տարի ժամկետով, ներառյալ.

- Արտադրողի ինժեներների «թեժ գծի» շուրջօրյա, ներառյալ հանգստյան և տոնական օրերին հասանելիություն մատակարարված սարքավորումների և ծրագրային միջոցների աշխատունակության վերականգնման և շահագործման վերաբերյալ խորհրդատվության տրամադրման համար: Գնորդն ուղղակիորեն պետք է կարողանա կապ հաստատել արտադրողի տեխնիկական աջակցության առաջին հասանելի ինժեների հետ: Վեբ-ինտերֆեյսի միջոցով հայտ գրանցելու կամ արտադրողի տեխնիկական աջակցության ինժեների հետ զրուցելու հնարավորություն:
- Մասերի փոխարինումը պետք է իրականցվի համակարգի տեղակայման վայրում:
- Սարքավորումների մշտադիտարկման գործիքների տրամադրում ՝ անսարքությունը շտկելու և արտադրողի Help Desk համակարգում ինքնուրույն վերանորոգման հարցում կատարելու համար՝ առանց օգտագործողի կամ Գնորդի ադմինիստրատորի միջամտության:
- Շուրջօրյա խորհրդատվությունների տրամադրում մատակարարված համակարգերի աշխատունակության վերաբերյալ, ներառյալ հասանելի թարմացումների (firmware, patches, Updates, BIOS) տրամադրումը:
- Համակարգի ապարատային և ծրագրային բաղադրիչների համագործակության վերաբերյալ հարցերի լուծման համար պետք է գործի մեկ միասնական հանգույց:

Համակարգը պետք է

- ապահովի տվյալների առնվազն 99,999% հասանելիություն,
- պարունակի առնվազն երկու կառավարման մոդուլներ, որոնք աշխատում են Active-Active ռեժիմում և ապահովում տվյալների պահպանման համակարգի խափանակայունությունը դրանցից ցանկացածի խափանման դեպքում, մոդուլներից **յուրաքանչյուրը** համալրված առնվազն
  - մեկ կենտրոնական x86, առնվազն վեց միջուկ ունեցող պրոցեսորով,
  - առնվազն 16Գբ օպերատիվ հիշողությամբ,
  - առնվազն 4 հատ iSCSI-10Գբ SFP+ միջերես,
  - առնվազն երկու հատ SAS-12Գբ ընդլայման միջերես դիսկային դարակաշարերի համակցման համար,
  - մեկ հատ Ethernet 1/10Gb 10GBASE-T (RJ45) կառավարման պորտ,
- համակարգը պետք է թույլ տա ավելացնել ակտիվ կառավարման մոդուլների քանակը՝ հասցնելով 8-ի
- համատեղելի լինի SSD, SAS-10K, SAS-15K, NLSAS տեսակի դիսկերի հետ,
- **ներառի հետևյալ տեսակների ու քանակի դիսկեր.**
  - յոթ հատ 1.2Տբ, SAS, 12Գբ, 10,000 պտույտ/ր, 2.5" դիսկեր,

- յոթ հատ 960Գբ, SAS, 12Գբ 2.5" SSD կրիչներ:

- ապահովի դիսկերի խափանման դեպքում դրանց ավտոմատ փոխարինման մեխանիզմ՝ կիրառելով դիսկերի «տաք-փոխարինման» տեխնոլոգիան (Hot-Sparing): Համակարգը պետք է թույլ տա ավելացնել և պակասեցնել «տաք-փոխարինման» դիսկերի քանակը առանց տվյալների հասանելիության և համակարգի աշխատանքի խափանման:
- թույլ տա կատարել կառավարման մոդուլների միկրոկոդի թարմացում աշխատանքային ռեժիմում առանց տվյալների պահպանման համակարգի աշխատանքի խափանման, առանց ռեպլիկացիայի խափանման և առանց հետագա համաժամանակեցման անհրաժեշտության, առանց առկա տվյալներին մուտքի խափանման,
- թույլ տա դիսկային դարակաշարերի և կառավարման մոդուլներների խաչաձև միացում, բարձր հասանելիություն: Դիսկային դարակաշարերից մեկի լիովին խափանման դեպքում առկա մյուս դարակաշարերը պետք է հասանելի լինեն: Ընդ որում, դարակաշարերի ավելացումը, պակասեցումը պետք է հնարավոր լինի առանց համակարգի աշխատանքի ընդհատման,
- համակարգի դիսկային ծավալի NFS v4, SMB v3.1.1 և FTP արձանագրություններով մուտքի համար համակարգը պետք է թույլ տա ավելացնել հատուկ կառավարման մոդուլներ,
- համակարգը պետք է թույլ տա անհրաժեշտության դեպքում ընդլայնել դիսկերի քանակը՝ հասցնելով առնվազն 200 հատի, առանց կառավարման մոդուլների փոփոխման և պետք է ներառի ընդլայնման համար անհրաժեշտ բոլոր արտոնագրերը,
- համակարգը պետք է ներառի ստորև նշված բոլոր տեխնոլոգիաները ներառյալ դրանց արտոնագրերը, եթե դրանց կարիք կա.
    - Thin Provisioning, որպեսզի համակարգը ֆիզիկական կրիչների վրա պահուստավորի միայն փաստացի ձայնագրված տվյալների համար անհրաժեշտ նվազագույն ծավալը,
    - Դատարկ բլոկների հայտնաբերում՝ առանց դիսկերի վրա դրանց համար ֆիզիկական ծավալ առանձնացնելու,
    - Redirect-On-Write ակնթարթային պատկերների ստեղծման գործառույթ, որը չի պահանջի հավելյալ հատուկ ծավալի հատկացում՝ այդ պատկերների փոփոխությունների պահպանման համար,
    - Համակարգը պետք է ապահովի հատորների ակնթարթային պատկերների գրելն ու կարդալը,
    - Համակարգերից յուրաքանչյուրը պետք է ապահովի հատորների օնլայն միգրացիան ակտիվ ծանրաբեռնվածության ռեժիմում մյուս համակարգի վրա առանց դրանց վրա աշխատող հավելվածների և աշխատանքի խափանման,
    - QoS առավելագույն ծանրաբեռնվածության սահմանափակման գործառույթ՝ կախված վայրկյանում կատարվող գործողությունների քանակից և փոխանցվող տվյալների ծավալից,
    - Համակարգը պետք է թույլ տա միասնական դիսկային խմբի սահմաններում տեղադրել տվյալների բլոկեր, որոնք պաշտպանված կլինեն RAID10 և RAID5 աստիճաններով: Համակարգը պետք է նաև կարողանա ինքնուրույն RAID10 աստիճանի քեշավորել RAID5 կամ RAID6-ով պաշտպանված տվյալների բոլոր կամ կամայական հատորները՝ ապահովելով կուտակված փոփոխությունների հետագա վերակառուցումը ստվերային ռեժիմում RAID10-ից հենց այն աստիճանի RAID-ի, որը համապատասխանում է յուրաքանչյուր քեշավորված հատորին,
    - Համակարգը պետք է ապահովի հատորների լոկալ ռեպլիկացիայի գործառույթ՝ ստեղծելով դիսկային խմբերի ամբողջական ֆիզիկական կլոնը, հատորների օնլայն միգրացիան դիսկերի ֆիզիկական խմբերի միջև առանց տեղափոխվող, ինչպես նաև սինխրոն վերարտադրվող, դիսկերի մեկ կամ մեկուսացված տարբեր խմբերի սահմաններում տեղակայված հատորների լոկալ զույգերի հասանելիության խափանման,
    - Համակարգը պետք է ապահովի կառավարման մոդուլների FC պորտերի համար WWN հասցեների NPIV վիրտուալացում՝ թույլ տալով կատարել համակարգի կառավարման մոդուլների միջև այդ WWN հասցեների ակնթարթային անցում, որը անտեսանելի կլինի համակարգին միացված սերվերների համար, կկատարվի առանց ուղիների փոփոխության ու առանց տվյալների հասանելիության խափանման այդ ուղիների միջոցով, որոնք հասանելի են սերվերներին մինչև WWN հասցեների այդպիսի անցումը, այդ ընթացքում և դրանից հետո:
    - Համակարգը պետք է կատարի տվյալների սեղմում ֆոնային ռեժիմում ինչպես մեխանիկական դիսկերի այնպես էլ SSD կրիչների վրա առանց արագագործության վրա ազդեցություն ունենալու և առանց համակարգի ադմինիստրատորի միջամտության և/կամ ձեռքով մեկնարկման,

- Համակարգը պետք է ապահովի տվյալների բազմաշերտ ավտոմատացված պահպանման գործառույթ, այսինքն՝ տվյալների մինչև 512կբ բլոկերի ինքնուրույն, առանց համակարգի ադմինիստրատորի միջամտության տեղափոխություն տարբեր տեսակի դիսկերի վրա՝ կախված այդ բլոկերի ծանրաբեռնվածությունից: Համակարգը պետք է ունակ լինի բաշխել տվյալները առնվազն երեք տեսակի՝ SSD, SAS-15K, SAS-10K դիսկերի վրա: Գործառույթը պետք է իրականացվի համակարգի կառավարման մոդուլներում ներկառուցված միջոցներով՝ առանց հավելյալ սարքավորման անհրաժեշտության:
- Համակարգը պետք է ապահովի աշխարհագրորեն բաշխված հեռահար տվյալների կրկնօրինակումը տվյալների միաժամանակյա «Active-Active» հասանելիությամբ՝ ապահովելով կրկնօրինակման զույգի երկու հատորներին (առաջնային և պահեստային կայքերում) միաժամանակ կարդալու և գրելու հասանելիությունը:
- Համակարգը պետք է կարողանա ապահովել տվյալների պահպանումը «Split Brain» իրավիճակում աշխարհագրորեն բաշխված «Active-Active» վերարտադրության ընթացքում՝ երրորդ անկախ հարթակում քվորում կազմակերպելով: Այս գործառույթը պետք է կանխի երկու կրկնօրինակվող կայքերի միջև տվյալների ապահամաժամանակեցման դեպքերը՝ կայքերի միջև կապուղու կորստի կամ որևէ այլ իրադարձության առաջացման դեպքում, որոնք կհանգեցնեն «Split Brain» իրավիճակի:

Բ) Սերվերային մեկ համակարգի բնութագիրը

Սերվերային պահարանի մեջ տեղադրվող սերվերային համակարգ ներառյալ.

- Երկու կենտրոնական պրոցեսոր, յուրաքանչյուրը առնվազն 12 միջուկ և 24 հոսք ունեցող, քեշ հիշողությունը առնվազն 18Մբ, բազային հաճախականությունը առնվազն 2.7 ԳՀց,
- 256Գբ DDR4 2933 ՄՀց registered տեսակի օպերատիվ հիշողություն՝ տեղադրված այն ծավալի մոդուլներով, որպեսզի զբաղեցնի առկա բոլոր սլոտների կեսից ոչ ավելին,
- Ներկառուցված Երկու հատ 16ԳԳբ ծավալով microSD քարտերով մոդուլ՝ նախատեսված ծրագրային համակարգի տեղադրման համար
- Կրկնակի, միմյանց ապահովագրող սնուցման բլոկեր նախատեսված ՀՀ էլ. սնուցման ցանցի հետ աշխատելու համար: Սնուցման բլոկերը պետք է հնարավոր լինի փոխարինել աշխատանքային ռեժիմում առանց որևէ համակարգի աշխատանքի խափանման: Լրակազմում պետք է ներառված լինեն նաև հոսանքի մալուխները,
- Հեռահար կառավարման մոդուլ ներառյալ արտոնագիրը, եթե դրանց կարիքը կա,
- Երկու հատ 10Գբ և Երկու հատ 1Գբ ցանցային ինտերֆեյսեր,
- Սերվերային պահարանի մեջ տեղադրման համար անհրաժեշտ ռելսեր, պարագաներ
- Արտադրողի երաշխիք առնվազն երեք տարի ժամկետով

Գ) չորս ցանցային կոմուտատորներ

Դասակարգիչ	Բնութագիր
Չևածափ	1RU
Կոմուտացման մակարդակների աջակցում	Layer2, Layer3
Պորտեր	12x SFP+; 3x QSFP+, Max 10GbE density - 24
Կառավարում	1 x RJ45 կոնսոլային կառավարման պորտ RS232 ազդանշանմամբ, 1 x RJ45 micro-USB-B կոնսոլային պորտ, 1 x RJ45 10/100/1000Base-T կառավարման Ethernet պորտ

Աջակցվող գործառույթներ	Linux միջուկի հիման վրա գործող օպերացիոն համակարգ, որն ապահովում է համակարգի բոլոր գործառույթների աշխատանքը առանց լրացուցիչլիցենզավորման: ՕՀ-ի բաց բեռնավորիչ՝ այլ օպերացիոն համակարգերի տեղադրումը թույլ տալու համար: Առանց օղակների առաջացման խափանակայուն վիրտուալ ֆաբրիկայի կազմակերպման հնարավորություն: Առանց աշխատանքի խափանման ծրագրային ապահովման թարմացման հնարավորություն: iSCSI, DCBx, ETS տեխնոլոգիաների աջակցություն: VLAN, MSTP, VRF-Lite, SNMP v1 v2, MIB, BGP, OSFP, Syslog, TACACS, RADIUS. Jumbo ֆրեյմերի աջակցում MTU 9,416 բայթ ծավալով MAC հասցեներ: 272K (մասշտաբավորված L2 ռեժիմում) IPv4 երթուղիներ: 200K IPv6 երթուղիներ: 130K Layer 2 VLANներ: 4K
Կոմուտացման արտադրողականություն	840 Գբիթ/վրկ
Թողունակություն	630 Մփ/վրկ
Հապաղում	800 նանովրկ
Փաթեթների բուֆեր	Առնվազն 12Մբ.
CPU հիշողություն	4Գբ
Լրացուցիչ լրակազմ	Առնվազն: 12x SFP+ 10GbE SR Transceiver 300m. 24x SFP+ to SFP+ 10GbE DAC cable 3 meter 2x QSFP28 to QSFP28 100GbE DAC cable 0.5 meter
Երաշխիք և սպասարկում	Առնվազն երկու, արտադրողի կողմից ավտորիզացված սպասարկման կենտրոնների առկայություն ՀՀ տարածքում: Գործընկերոջ աջակցություն առնվազն 3 տարվա ընթացքում:

Դ) անխափան սնուցման սարք

Սերվերային պահարանի մեջ տեղադրվող անխափան սնուցման օնլայն տեսակի (կրկնակի փոխակերպմամբ) սարք, որը պետք է ունենա առնվազն 9կՎտ հզորություն, նախատեսված լինի ՀՀ էլ. սնուցման ցանցի հետ աշխատելու համար, ունենա վեբ միջերեսով կառավարման հնարավորություն:

- Մուտքային հոսանքի միջակայքը՝ 180-290Վ, նոմինալ մուտքային լարումը՝ 220/230Վ (կարգաբերվող), սարքը պետք է նախատեսված լինի էլեկտրաէներգիայի գեներատորների հետ աշխատելու համար
- մուտքային էներգիայի գործոնի ճշգրտում 0.99 կամ ավելին, նոմինալ լարման դեպքում.
- Նոմինալ ելքային լարումը՝ 220/230Վ (կարգաբերվող), մաքուր սինուսոիդ
- Սերվերային պահարանի մեջ տեղադրվող հոսանքի բաշխման մոդուլ՝ պաշտպանված ավտոմատ անջատիչով
- Ելքային առնվազն ութ հատ C13 (10Ա), երկու հատ C19 վարդակներ՝ պաշտպանված ավտոմատ անջատիչով
- Հեղուկ-բյուրեղային էկրան, որը պետք է ցույց տա ընթացիկ վիճակի և առկայության դեպքում ահազանգերի վերաբերյալ տեղեկություն
- 25% բեռնվածությամբ մարտկոցներից ավտոնոմ աշխատելու դեպքում սարք պետք է ապահովի առնվազն 50 րոպե աշխատելաժամանակ,

- Սերվերային պահարանի մեջ տեղադրման համար անհրաժեշտ ռելսեր, պարագաներ
- Ներառված ծրագրային համակարգ, որը պետք է թույլ տա մշտադիտարկել ցանցում առկա նույն արտադրողի բոլոր անխափան սնուցման սարքերը
- Սարքի և մարտկոցների համար արտադրողի երաշխիք առնվազն երկու տարի ժամկետով

** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ԳՆՈՐԴ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900012410016
ՀՎՀՀ 02593108

Է.Կիրակոսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ
ք. Երևան, Չարենցի 37
ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 20500 22067171001
ՀՎՀՀ 01815551

Ա. Բալդրան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«21» «հոկտեմբերի» 2020 թ. կնքված
ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/181 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ *

ՀՀ դրամ

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	30211150/1	Հիմնական և պահուստային տվյալների մշակման կենտրոնների վերազինման համակարգ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	44775000	44775000	44775000	44775000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ԳՆՈՐԴ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900012410016
ՀՎՀՀ 02593108

Է.Կիրակոսյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ
ք. Երևան, Չարենցի 37
ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 20500 22067171001
ՀՎՀՀ 01815551

Ա. Բալդրան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

ԻՆԵԿՈԲԱՆԿ

21 OCT 2020 № 2118

ԵՐԱՇԽԻՔ N EA20/00618
(որակավորման ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/181» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքվելիք N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/181» պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 44,775,000 (քառասունչորս միլիոն յոթ հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ գումար (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/181» ծածկագրով կնքված պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև բենեֆիցիարի կողմից պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, ոչ ավել, քան մինչև 15 փետրվարի 2021թ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/181» ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ
ՀԱՇԻՎՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԲԱԺՆԻ ՂԵԿԱՎԱՐ

ՏԻԳՐԱՆ ԱՅՎԱԶՅԱՆ

21/10/2020

ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ, 0001, ք. Երևան, Թումանյան փ. 17, Հեռ.՝ +(374 10) 510 510
Ֆաքս՝+(37410) 510 573, Էլ. փոստ՝ inecobank@inecobank.am, www.inecobank.am

ԻՆԵԿՈԲԱՆԿ

21 OCT 2020

№ 2119

ԵՐԱՇԽԻՔ N EA20/00619
(պայմանագրի ապահովում)

1.Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ միջև կնքվելիք N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/181» պայմանագրից բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահով:

2. Երաշխիքով «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) բենեֆիցիարին վճարել 4,477,500 (չորս միլիոն չորս հարյուր յոթանասունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումար (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում:Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև կնքված N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/181» պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պրիցիպալի կողմից ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ոչ պակաս, քան 08 փետրվարի 2024թ.:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/181» պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ
ՀԱՇԻՎՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԲԱԺՆԻ ՂԵԿԱՎԱՐ

ՏԻԳՐԱՆ ԱՅՎԱԶՅԱՆ

21/10/2020

ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ, 0001, ք. Երևան, Թումանյան փ. 17, Հեռ.՝ +(374 10) 510 510
Ֆաքս՝+(37410) 510 573, Էլ. փոստ՝ inecobank@inecobank.am, www.inecobank.am